

ՌԱԶԱՅԻՆ ԻՍՐԱՅԵԼՑԱՆ

Խ Ա Զ Ք Ա Ր Ե Ր


(Կազմավորման և գարգացման համառոտ ակնարկ)

Չնայած անքարենպաստ պայմաններին, պատմական Հայաստանում արվեստը հարուստ էր ձևերով և բազմապիսի դրսություններով՝ ճարտարապետություն, մանրանկարչություն, քանդակ, գեղանկարչություն կամ որմնանկարչություն։ Ահա այն շարանը, որոնց մասին մենք շատ թե քիչ բավարար տեղեկություն ունենք։

Ճարտարապետությունը պարզ է. դա կառուցվածքների բազմազան տեսակներն

են վերարտադրման տեսակետից հեքիաթային գեղեցկության օրինակներ։

Բանդակագործությունը հիմնականում հանդես է գալիս բարձրաքանդակներով՝ մարդկային և կենդանական թեմաներով ու ավելի մեծ չափով երկրաչափական և բուսական զարդաքանդակներով։ Այսուղ մենք ունենք վերջիններին չգերազանցված վարպետության հասնող գործեր։ Բանդակագործության մեջ ենք հիշում և՛ զարդա-



Նկար 1

են, թե՛ եկեղեցական և թե՛ քաղաքացիական (տաճարներ, կամուրջներ, պալատներ, հյուրանոց-քարավանատներ և այլն)։

Մանրանկարչությունը մեր ձեռագրերում հանդիպած սքանչելի նկարներն են, որոնց մեջ տեսնում ենք մոնումենտալ պատկերներ, հորինվածքային հոյակապ հնարներով և կենդանական ու բուսական աշխար-

բանդակը, և՛ առհասարակ այն բոլոր նախշերը, որոնցով զարդարում ենք շենքը։

Վերջապես որմնանկարչությունը, որից շատ քիչ նմուշներ են հասել մեզ, այդ իսկ պատճառով մեզ քիչ է հայտնի, հատկապես որ եղածն էլ շատ վատ վիճակում է։

Ահա հիմնականում այն ճյուղերը, որոնց մեր արվեստը ընդգրկել է դարերի ընթացքում, զարգացրել և հասցրել այն աստի-

ճանի, որ դուրս է եկել իր նեղ ազգային պատմաններից ու տարածվել այլ ժողովորդների մեջ, այս կամ այն չափով թողելով Երանց մոտ իր նետքերը: Դրա մեռնելու համար տարրերը, հասնելով Հայաստան, մշակվել և դարձել են ստեղծագործող ժողովրդի սեփականությունը՝ հարստացնելով իր մշակութային գանձարանը:

Բայց նայ պատմական իրականությունն ունեցել է մի շարք այնպիսի պայմաններ, որոնք անմիջականորեն են ազդել արվես-



Նկար 2

ափ վրա՝ առաջ բերելով ձևեր, որոնք յուրամատուկ են Հայաստանին և չեն նաև դիմում անամ հարևան երկրներում: Անապատ է պատմառը, որ մենք, թվելով արվեստի ճրութերը, շեշտում ենք նախ ստացածարք, որը մի գլուխ բարձր է կանգնած եղել այդ բռնը ճրութերից և իր փայլուն զագարներով վեր պացել այնքան բարձր, որ Երան ճառագայթներից հասել են Սուլյանիկի ափերը, թողել են նետքեր նեռու հյուսիսում, թողել են նետքեր Միջին Ասիայում:

Առանձնամատուկ պայմաններն են, որ զարգացրին զարդարվեատը, մանրանկարչորդունը և նոյն պայմաններն են, որ նվազ թողեցին որմաններչորդունը, կոր բանդակը և ստիլապանկ մարդու պատկերը: Խնչափի՞ր էին այդ պայմանները. նախ և առաջ դա հայ եկեղեցու ինքնուրուցի ուղին էր: Հայ եկեղեցին նաև արվեստի բնագավառում չեր հանդործում այն ճանապարհը, որը տանում էր Հայաստանի հարստականությանը Բյուզանդիային: Ունենալով սեփական կրոնական դավանանք, նա



Նկար 3

ստեղծել է նաև արվեստի ասպարեզում ուրուց օրենքներ ու ոճավորումներ, որոնք նաճախ խիստ տարրերվում են բյուզանդականից: Անա ինչպիսի նշանակություն էր տափս Մատը այս հանգամանքին:


Մյուս պայմանը քաղաքական վիճակի էր: Շատ շոտ կորցնելով պետական իշխանությունը, նաև ժողովորդը մնում էր օտար տիրապետության տակ: Բայց դրա մեռն միասին երկրում գործում է նայ եկեղեցին, որը մնում է որպես ուժ և զիսափորում ժողովորդը՝ օտար իշխանության

տված իրավունքի սահմանում լուծելով ներքին քաղաքական և տնտեսական հարցերը:

Մի կողմից ժողովրդի ծանր վիճակը, մյուս կողմից օտար նվաճողների կեղեքումը պատճառ է դառնում, որ երկրում առաջանան հոգումներ: Դրանք ունեցան այն հետևանքը, որ աշխարհիկ տարրը զորացավ և տարածվեց, անդրադարձավ վարչական սիստեմի, ինչպես և ազդեց նշա-

թյամբ և թե՛ ձևով: Եվ դրանով տասներկուտասներեքը դարերի ճարտարապետությունը հասցնում մի նոր փայլուն վերելքի, որը մինչ այդ հասել է այն սահմանին, որից հետո նա այլև չէր աճում, այլ պճնրվում էր միայն յուր հետաքրքրությունը չկորցնելու նպատակով:

Վերադառնանք մեր բուն ճյուղին: Ինչպես ասացինք, մեր արվեստի որոշ ճյուղեր զարգանում են այնքան, որ դառնում են մեծ ու դուրս գալիս հայկական հողի սահմաններից: Դրա հետ միասին որոշ ճյուղեր չեն զարգանում, նվազում են, մնում



Նկար 4



Նկար 5


կույրի վրա: Այստեղ է, որ Ֆրիկը բարձրածայն յուր բողոքն է հայտնում անարդարության դեմ. այստեղ է, որ Երգմանցին, իր կյանքն անցկացնելով վանքի խուցերում, վերջապես խորը շունչ է քաշում զարնամ արբեցնող օդով և երգում այդ օրվա արևը և ամենակարող քննությունը: Վերջապես այդ ժամանակ է, որ ժողովուրդը ստեղծում է ժամանուն՝ զուտ հայկական երևոլք՝ հիմնված ժողովրդական տաճ սկզբունքի վրա, և՝ իր ֆունկցիայով, ինչ խոսք, և՝ աշխարհիկ բնույթ կրող մի կառուցլածք, որ նոր էր թե՛ բովանդակու-

թույլ ու վտիս: Զարգանում են արվեստի այն ճյուղերը, որտեղ չկա մարդու կերպը, իսկ սրա հետ կապված է որմնանկարչությունն ու քանդակը՝ մարդու պատկերով: Այս բանին արգելում է հայ եկեղեցին, որ պայքարում է պատկերների դեմ իր ամբողջ պատմության ընթացքում, մինչև 13-րդ դար, իսկ ավելի երկար ժամանակ նա արգելում է եկեղեցու մեջ պատկերի ցուցադրումը: Պատկերամարտությունը հաստուի չէր միայն Հայաստանին, պայքարում էր և Բյուզանդիան: Բայց այլ էր պայքարը այստեղ, այլ էր այստեղ՝ Հայաստանում:


Բյուզանդիայում պարբարը փոփոխական էր. մեկ դեմ էին, մեկ՝ կողմ: Եվ վերջապես պետականորեն չէր արգելվում, այլ միայն տարրեր ուղղությունների տեսության արդյունք էր այն: Համեմայն դեպք, այն հանապահը, որ վրացական եկեղեցին և հոգականը միշտ զարդարված են եղել որմանկարներով, արդեն ապացուցում է, որ պատկերն այնուղիւ այնպէս չէր հետապնդվում, ինչպէս Հայուսուանում, որտեղ

մարիվ որոշումներ, կանոններ՝ խաչին և նրա օճմանը նվիրված, արդեն ցոյց են տախի պատկերի բացասական: Խաչը խիստ պահպանվում է և երկրպագվում:

Գրիգոր Մագիստրոսը 11-րդ դարում գրում է, որ պատկերապաշտները դևա-պաշտներ են: Ինչո՞ւ էր դեմ եկեղեցին պատկերին: Ինչո՞վ էր պատճառաբանում նայ հոգեորդականությունն այդ հանգամանությունում, որտեղ Պատճառներ քերվում են շատ: Ահա



Նկար 6



Նկար 7

պարբար խիստ էր և արմատական ու անց էր կացվում պետության նաևնակցությամբ: Եթե մենք, այնուամենայնիվ, հանդիպում ենք որմանկարների, ապա դրանք, որքան գիտենք, օրթոդոքս եկեղեցիներում են լինում¹:


Այն հանգամանքը, որ չկան օրենքներ և կանոններ պատկերները կիրառելու վերաբերյալ, բայց, սրան հակառակ, կան բազ-

¹ Հեղինակի այս տեսակները վերանայման կարիք ունի (Վ. Հ.):

երանցից մեկ-երկուսը: Դախ որ Քրիստուի պատկերը, որ մարմարական է, միևնույն ժամանակ իր վրա պետք է կրի և Սատծո պատկերը, իսկ եթե այդպես է, ապա ուրեմն ամեն մի նկարիչ վերաբարել չի կարող այն, իսկ ոչ արժանավայել պատկերումն անուղղարձելի է: Պատճառներից մյուսն այն է, որ ներանունները նույնպես պաշտել են նկարը, իսկ այս հանգամանքը նարող էր շփոթության մեջ զցել անհավասարներին: Թույլ էր տրվում միայն Քրիստոսին եերկայացնող խորհրդանշանները՝

ինչպես ձուկը, գառը և այլն: Խսկապես, սրանք հատկապես շատ են քանդակվում եկեղեցիներում: Բայց ամենից շատ խրախուսվում է խաչը, որի պատճառով և քրիստոնյաները կոչվելիս են եղել խաչապաշտներ:

13-րդ դարի սկզբին միայն, այն է 1204 թվականին Սիոնում հատուկ որոշում է կայսցում պատկերը ընդունել և հարգել: Շատ ուշ միայն կազմվում են կանոններ՝



Նկար 8

պատկերը օծելու և այլ ծեսերի վերաբերյալ: Անհա մոտավորապես այն փաստերը, որի պատճառով մեզ մոտ խիստ ետ է մնում պատկերի զարգացումը, և անում են արվեստի այլ ճյուղերը՝ նախ ճարտարապետությունը, հետո՝ մանրանկարչությունը, ապա և՝ զարդարվեստը: Պետք է նշել այն հանգամանքը, որ քանդակները, որտեղ կենդանիներ են պատկերված, շատ ավելի լավ են նկարված, քան մարդք: Օրինակները քազմաթիվ են, իսկ լավը (խոսքը մարդու պատկերին է վերաբերում) շատ հազվագյուտ է, որոնց մեջ առաջին տեղն է գրավում Գագիկի արձանը²: Անհա այսպի-

սի գաղափարա-դավանաբանական հիմքերի վրա է ստեղծվում Հայաստանի քաղմադարյան մշակույթը, այսպիսի պայմաններում զարգանում հայ արվեստը:

Այս ամենից բացի ստեղծվեց նաև արվեստի մի ճյուղ՝ և՛ խաչքարը, մահարձակի հայկական այդ կերպը, ճյուղ, որ ինքուրույն է համարյա ի սկզբանե, իր ծագման օրից մինչև վերջ, և գնալով ավելի ու ավելի է զարգանում, և՛ ավելի դառնում




Նկար 9


միատիպ և ազգային:

Թվելով մեր արվեստի ճյուղերը, որոնք ըստ էության նույնն էին, ինչ-որ այլ ժողովորմաներինը (տարբերվելով ազգային ձևով միայն), մենք այստեղ չենք հիշատակում խաչքարը, քանի որ այն մի ուրույն ատեղծագործական ձև էր ոչ միայն նրանով, որ այլ ժողովորմաների մոտ չենք հանդիպում, այլ յոր էությամբ, յոր բովանդակությամբ ու ձևով: Եթե փորձելու լինենք այն դասելու արվեստի մեջ, ապա դժվար թե մենք կարողանանք գտնել նրա տեղը. Վերագրել ճարտարապետական արվեստին, թե՝ քանդակագործությանը: Եվ խսկապես, արվեստի այս ճյուղը յոր մեջ պարունակում է որքան ճարտարապետական մոտիվ, նույնքան և քանդակային: Եվ այս իսկ

² Հայվանաբար նկատի ունի Գագիկ 2-րդ Բագրատունուն (Վ. Հ.):



Նկար 10



Նկար 11


սպառնառով նաև զատկում է այլ ճյուղերից՝ գրավելով իր ուրուց տեղը:

Հայ վարպետը կատարելության է հասցենում այդ խաչքար-կոթողը, որ, զարգացման երկար ու բարդ ուղի անցնելուց նետո, դառնում է մի հոյակապ մոնումենտալ և հաստատուն ծավալով կերտված՝

արտահայտված պարզ և հասակ ձևերով: Եվ այդ սքանչելի արվեստը դառնում է մի առանձին ասպարեզ, որը մինչ օրս սպառնում է իր հետազոտողներին և արժանի գնահատականին:

Խաչքարը մի բարե սալ է՝ կանգնեցրած պատվանդանի վրա: Նրա երեսին բան-

դակված է խաչը՝ շրջապատված զարդարանդակով³: Խաչքարի հիմնական առանձնահատկությունը նրա ընդհանուր հորինվածքն է, ապա ձգված ձևը, նրա շեշտված համաչափությունը, որն ընդգծվում է սալի ներքի մասի նեղանալով, դրանով իսկ առավել լարվածությունը ստեղծելով այդ սարմնի մեջ: Խաչքարի գեղարվեստական մյուս արժանիքը սալի երեսի զարդարանդակն է, որը հասցվում է արտօնակարգ բար-



Նկար 12

ծըր վարպետության ստեղծելով նրբության ո գեղեցկության հրաշալիքներ:

Խաչքարն արդեն հեռուից գրավում է դիտողին յուր արտահյատիշ որվանելարով, շեշտված կուռ պատկերով, իսկ մոտիկից՝ հմայիչ և հոգիչ զարդարանդակներով:

Մի քանի խոսք խաչքարերի տարածման մասին այլ երկրներում: Ըստ Օրբելու և Վերմանի, խաչքարի տիպի կոթողի մի քանի օրինակ հանդիպում ենք Անգլիայում: Կան քարեր կորբանում՝ ուղղահյայց դրված, որոնց վրա խաչը պրիմիտիվ ձևով է քանդակված (Ակ. 1): Այս փաստերը

հատուկենու՝ հետագայում ինչքան էլ ավելանան, կիսեն միայն պատահական երեւություններ: Անհավանական չէ, որ դրանց ստեղծման մեջ մասնակցած լինեն հայ վարպետները: Բավարարվելով առաջման այլքանով, անցնենք խաչքարերի ծագման հարցին:

Ինչո՞ւ և ինչպես առաջ եկավ մեզ մոտ խաչքարը:

Սոհիարակ մահարձանը հին է նույնան, որքան և մարդու ստեղծած մշակույթը: Բոլոր ժողովուրդներն եւ ունեցել են մահվան հետ կապված իրենց ծեսերը, կարգը և ձևերը: Հայ ժողովուրդը նույնպես ունեցել է այդ սովորությունը, որ դարերի ընթացքում ստեղծել է բազմապիսի հուշարձաններ:

Մեր կոյության մշակույթից հայտնի է, որ դոլմեններից հետո կանգնեցվում են վիշապները՝ ուղաճիգ քարեր: Հետագայում դրանք վերափոխվեցին ավելի երկրաշահական ձևերի և դարձան ուրարտական, ապա հայաքրիստոնեական և ետքիստոնեական կոթողներ (ատելաներ), որոնք մեծ տարածում ունեցան Հայաստանում (Ակ. 2): Կոթողը կորվածքում քառակուսի, մոտ քառասուն-վարսուն սանտիմետր կողմերով, կանգնեցված էր խորանարդան պատվանդանի վրա, որի մեջ ազուրված էր իր ստորին մասի եղուստով (Ակ. 3): Նախնական շրջանում կոթողները զարդարանդակվել են: Այսպիսի օրինակները համեմատաբար քիչ են: Հայտնի են Դաելի և Կողրի կոթողները (Ակ. 4): Քանի ակները հիմնականում, ըստ երևույթին, եղել են բուսական մոտիվներով (Ակ. 5): Ավելի ուշ հրանում արմատավորվում է մարդկային պատկերը: Բ. Առաքելյանն ըստ բովանդակության կոթողները բաժանում է երեք խմբի՝ հայաքրիստոնեական, անցումային և քրիստոնեական: Երկրորդ շրջանի համար բնորոշ է Թայինի բազմաթիվ կոթողներից Տրդատի առասպելով քանդակը, որտեղ նա խոզ է դառնում: Սա արդեն քրիստոնեության մոտիվների մուտքը է հայ արվեստի մեջ: Սրբնից հետո քրիստոնեական սյուժեն ավելի ու ավելի է զարգանում (Ակ. 6, 7): Առաջ է գալիս և խաչը: Հետաքրքիր է, որ խաչի արդեն պարտադիր ներկայությունը ստիպում է քանդակագործին հարմարվել տրված կոթողի ձևին, որը և կանխորոշում է խաչի վերձիգ՝ ձևը (Ակ. 8): Այդ ժամանակներում,

³ Այս հոդվածը շարադրելիս դեռևս Դվինում «Թևավոր խաչերը» գտնված չէին, այդ պատճենով մեղմակալը չի հիշատակել (Վ. Հ.):

ինչպես հայտնի է, խաչի ձևը դեռ հունականն էր, այսինքն չորս թևերն ել իրար հավասար: Եթե խաչը բանդակվում էր կորողի պատվանդանի վրա, ապա այն մուտքորապես հավասարաբն էր (նկ. 9), ասինքն չորս հավասար թևեր, որոնք ընդգրկվում են շրջանի մեջ: Այդ ժամանակ պատկերը արգելված չէր, դրա համար էլ խաչը դեռ հրատեղ չէր բունու:

Խաչի նշանակության աճեցուն զուգըն-



Նկար 13

թաց փոխվում է և նրա դիրքը՝ ցածից վեր: Բայց վեր բարձրանալով նկարիչը ստիպված է լինում ճգել խաչը ամրող երկարությամբ, որից և աղավաղվում է ձևը (տես՝ նկ. 8): Քանի որ խաչի նկարը դեռ հունական էր (այսինքն հավասարաթև), վարպետը նրան ճգված վիճակում քանդակում է նոյն սկզբունքով՝ հնարավորին չափ հորիզոնական թևերը դասավորելով խաչի մեջտեղում, որը նետագայում ավելի է բարձրանում: Անա այսպիսի կորողները զարգանում են և հասնում մինչև 7-րդ դար:

Օգտվելով հնագամանքից, կողենայինք անդրադառնալ մի մասնավոր հարցի: Տեսության մեջ կա կարծիք այն մասին, որ

եկեղեցիների անկյունների սրբածն մշակումը 7-րդ դարում չի կիրառվել, այլ երեսում է 10-րդ դարից հետո (Թորամանյան, Զորինաշվիլի): Քննարկվող կորողներում, որ 5—6-րդ դարերի հուշարձաններ են, արդեն կան անկյունների սրբածն մշակման օրինակներ: Վ. Հարությոնյանն Արուճի տաճարի մասին գրած իր աշխատու-



Նկար 14

թան մեջ նույնական այն կարծիքն է, որ դրանք գալիս են 7-րդ դարից⁵:

Նախքան խաչի պատկերումը, կորողների վրա քանդակվում էր այնպիսի տարր, որը համարյա պարտադիր կերպով տեսնում ենք բոլոր այդպիսի հուշարձաններում: Դա արձանի ներքևից վեր ճգվող տերներն են. պարզ մի նկար, որ մետսելից բաժանվում է երկու մասի և բաղկացած է 3—4 տերներ (նկ. 10): Պետք է ենթադրել, որ դա հնուց եկած բոց—կրակի սիմվոլիկ նշանն է: Թեև տերների ներ-

⁵ В. М. Арутюнян, По поводу датировки храма в Аручче, Ереван, 1946, стр. 24—25.

կայությունն այդ ժամանակներում պետք է համարել արդեն որպես կորցրած կրաքի նշան, բայց նրանք իրենց նախնական նշանակությամբ կրկնվում են տասնյակ դարերի ընթացքում առեղծված ավանդության ամենազդր ուժի շնորհիվ:

Նոյն է կոթողի մի այլ տարրը, որ դարձյալ համերիպում ենք շատ հուշարձաններում և որը հետագայում անցնում է խաչքարերին: Դա այն կլոր ծաղիկն է, որին ժողովուրդը զարդի մեջ միայն անվանում է «վարդ»: «Վարդ», «արդ», այս երկուն էլ պարսկերեն իմաստով արև են նշանակում: Գոյզե և «վարդապետ» բառը, որ մեր պատմագիրների մոտ հայտնի է ամենավաղ ժամանակներից: Նոյն ակունքն ունի արևապաշտությունը, արև և պետ: Այդ ծաղիկի սիմվոլիկ ձևն է՝ վեց թերթիկից բաղկացած ծաղիկ, մկարված շրջանի մեջ, նոյն շրջանի շառավի կորից կազմված (Ակ. 11): Ահա սրանք են կոթողների հաստատուն տարրերը⁶:

⁶ Հնդիանուր առմամբ ընդունելի համարելով հետինակի տեսությունը խաչքարերի առաջացման մասին կոթողներից, Բարկ ենք համարում նշել, որ այն նոր հյութերի հիման վրա (1948 թ. Դվինում հայտնաբերած «Թևավոր խաչեր»), կարիք ունի, լրացման: Միջանկյալ օտակը խաչավոր կոթողների և սալերի վրա քանդակված խաչերի միջն միջն կիմի համարել «Թևավոր խաչեր»: Եթե հետինակը ծանոթ չէր կարող լինել Դվինում գտնված այդ խաչերին, որոնք անտարելու 7-րդ դարին են վերաբերում, այսինքն կոթողներից մետք են ընկնում (տես՝ Կ. Պաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պետությունը, Երևան, 1958, էջ 150—151), առա Գ. Հովսեփյանի հյութերից օգտվելով այդպիսի մի «Թևավոր խաչ», գոյզե ավելի ուշ շրջանին վերաբերող, նա մկանել է, որի վերաբերությունը բերվում է 14 համարի տակ (Վ. Հ.):

Վերջապես հասնում ենք այն շրջանին, երբ հայ եկեղեցին յուր պայքարը պատկերի դեմ կտրուկ դարձնելով, վերջնականապես է արգելում այն: Դրա հիման վրա համարում է պատկերը և կոթողներից: Խաչը, որ այդ ժամանակներում արդեն տարածվել էր, մնում է մենակ, առանց մարդկային կերպարանքի:

Ինչպես տեսանք, կոթողը բարձր, քառակոտի հիմքով պրիզմա էր՝ դրված խորանարդան պատվանդանի վրա: Նրա բոլոր չորս կողմերից քանդակազրդ էր ուղիղ քանդակներով: Երբ վարպետին արգելում են կոթողի կողերի վրա քանդակել պատկերելով քանդակել միայն խաչը, նա այն քանդակում է միայն մի երեսին: Մյուս երեսները, որ ճիշտ նույն չափսի են, մնում են բաց: Հետո որ խաչը կարելի էր քանդակել միայն արևմտյան երեսի վրա: Մյուս կողերը մընում են դատարկ (Ակ. 12): Վարպետը, ավելորդ համարելով վիշապի կլոր մարմեց եկող հաստությունը, հասցնում է նրան այն նվազագույն չափին, որը կոնստրուկտիվ անհրաժեշտություն էր ներկայացնում սպառքը կապուն կամացնեցնելու համար: Ահա և առաջին քայլը: Պետք է ենթադրել, որ 7-րդ դարից հետո խաչի ձևը փոխվում է, նրա ցածի մասը զգալի երկարում է, սալի վրա քանդակվում է ձգված խաչը: Բայց սալի համաչափությունն այնպիսին է, որ նրա վերսի մասն ավելի լայն է, ներքեվինը՝ նեղ, խաչի ներքն իշնող ավելի երկար թիկ պատճառով: Այսպիսի խաչքարի վերնի մասի համար քաղը թողնում են լայն, իսկ ներքելը՝ նեղացնում (Ակ. 13):

(Ծարունակելի)